

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի 2016թ. նոյեմբերի 22-ի նիստի

ՀՀ Արագածոտնի մարզպետ, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովի նախագահ Գ.Գյոզալյանի հանձնարարությամբ նիստը վարում էր ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ տիկին Ն.Մովսիսյանը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին մարզպետարանի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովի 8 անդամներ, հարգելի պատճառով բացակայում էին հանձնաժողովի անդամներ Ս.Հովսեփյանը, Ժ. Ավետիսյանը, Ա. Հովհաննիսյանը, Ս.Պետրոսյանը, Գ.Ներսիսյանը, Վ.Հակոբյանը: Ս.Հովհաննիսյանի փոխարեն վարչության պետի հանձնարարությամբ նիստին մասնակցում էր Յու.Ներսիսյանը, Վ. Հակոբյանի աշխատանքից ազատվելու պատճառով նիստին ներկա էր վարչության պետի պաշտոնակատար Արտեմ Պետրոսյանը:

Օրակարգ

1.2016թ. ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ուղղությամբ կատարած աշխատանքների վերաբերյալ ՀՀ ԱՍՀ-ի նախարարության կողմից ներկայացված հաշվետվության ձևաթղթի մասին

/Զեկ.՝ ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ տ-ն Ն.Մովսիսյան/

2. Մարզի հաշմանդամություն ունեցող 22 երեխաների համար սայլակ և քայլակ ձեռք բերելու մասին:

/Զեկուցող՝ հանձնաժողովի քարտուղար Գ.Դանիելյան/

Առաջին հարցի կապակցությամբ ներկաները ծանոթացան հաշվետվության նոր 2 ձևաթղթերին՝ հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության և մարզում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին:

Մասնակիցները մշակված ձևաթղթերը ամփոփ տեղեկատվություն ներկայացնելու համարեցին հարմար ձևաչափ: Անհանգստացնող խնդիր է վիճակագրական

տվյալների ստացման հավաստի աղբյուրը: Նպատակահարմար գտնվեց այդ տեղեկատվությունը ձեռք բերելու համար պաշտոնական գրությամբ դիմել ՀՀ ԱՍՀ նախարարին՝ բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների միջոցով թվային տեղեկատվություն տրամադրելու համար:

Հանձնարարվեց՝

1. Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ պ-ն Ա.Դավայանին, Ա. Պետրոսյանին, տ-ին Գ.Դանիելյանին, Հ.Նազարյանին անհարժեշտ տեղեկատվությունները հավաքել՝ ընթացիկ տարվա հաշվետվությունը ներկայացնելու համար:

2.Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հանձնաժողովի երեք անդամներ այլևս չեն աշխատում մարզպետարանի աշխատակազմում, հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին հանձնաժողովի կազմում աշխատանքից ազատված աշխատողների՝ Ս.Պետրոսյանի, Վ.Հակոբյանի և Ն.Գալստյանի փոխարեն համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակով պատրաստել մարզպետի հրամանի նախագիծ:

Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ զեկուցեց տ-ին Գ.Դանիելյանը: Ներկայացվեց, որ մարզի հաշմանդամություն ունեցող երեխաներին աջակցելու նպատակով կատարվել է ուսումնասիրություն սայլակի և քայլակի կարիք ունեցող երեխաների թիվը ճշտելու համար: Պարզվել է, որ մարզում սայլակի կարիք ունեն 20, քայլակի 6 երեխա: «Հանգրվան» ՊՕԱԿ-ը այժմ հնարավորություն ունի տրամադրելու այդ օժանդակ պարագահերը՝ ՀՀ ԱՍՀ-ի նախարարի հանձնարարությամբ:

Հանձնարարել տ-ին Դանիելյանին՝

Պատրաստել գրություն՝ ուղղված ՀՀ ԱՍՀ նախարար պ-ն Ա. Ասատրյանին մարզի 20 երեխայի հաշմանդամության սայլակ և 6 երեխային քայլակ տրամադրելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահ՝

Գ.Գյոզալյան

Քարտուղար՝

Գ.Դանիելյան

